**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր**
**Ստեղծողի մոբիլ դպրոց**
**2014-2015 ուսումնական տարի**
6-9-րդ դասարաններ

| Բովանդակություն | VI | | VII | | VIII | | IX | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շաբ. | Տար. | Շաբ. | Տար. | Շաբ. | Տար. | Շաբ. | Տար. |
| **Ընդհանուր բաղկացուցիչ** | | | | | | | | |
| Մայրենի | 6 | 216 | | | | | | |
| Հայոց լեզու | | | 3 | 108 | 3 | 108 | 3 | 102 |
| Գրականություն | | | 3 | 108 | 3 | 108 | 3 | 102 |
| Անգլերեն | 3 | 108 | 3 | 108 | 3 | 108 | 3 | 102 |
| Ռուսերեն | 2 | 72 | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Մաթեմատիկա | 4 | 144 | | | | | | |
| Հանրահաշիվ | | | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Երկրաչափություն | | | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Բնագիտություն | 2 | 72 | | | | | | |
| Քիմիա | | | 1 | 36 | 1 | 36 | 1 | 34 |
| Ֆիզիկա | | | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Կենսաբանություն | | | 1 | 36 | 1 | 36 | 1 | 34 |
| Աշխարհագրություն | | | 1 | 36 | 1 | 36 | 1 | 34 |
| Պատմություն | 1 | 36 | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Հասարակագիտություն | | | | | 1 | 36 | 1 | 34 |
| Արվեստ | 2 | 72 | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Տեխնոլոգիա | 2 | 72 | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Ֆիզկուլտուրա և անվտանգ կենսագործունեություն | 3 | 108 | 3 | 108 | 3 | 108 | 3 | 102 |
| Ընդհանուր պարապմունք | | 40 | | 40 | | 40 | | 35 |
| **Դպրոցական բաղկացուցիչ** | | | | | | | | |
| Սովորողի ընտրած գործունեություն | 4 | 144 | 4 | 144 | 4 | 144 | 4 | 136 |
| Ընդամենը | 30 | 1084 | 34 | 1228 | 35 | 1264 | 35 | 1191 |
| **Անհատական բաղկացուցիչ** | | | | | | | | |
| Ինքնակրթություն, տնային ուսումնական աշխատանք | | | | | | | | |
| Լրացուցիչ կրթություն | | | | | | | | |

**Ուսումնական պլանի պարզաբանումներ**

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր), սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է:
2. Կրթական ծրագիր ընդունվում է այն սովորողը, որ իր ծնողի(օրինական ներկայացուցչի) հետ ընտրում է Ծրագիրը, սահմանված կարգով կնքում պայմանագիր ուսումնառության մասին:
3. Ուսումնական պլանը կազմված է ընդհանուր, սովորողի ընտրությամբ դպրոցական պարտադիր, անհատական բաղկացուցիչներից: Սովորողը կարող է անհատական բաղկացուցիչը չընտրել:
4. Դասարանում սովորողների թիվը 20-25 է: Սովորողի ընտրությամբ գործունեությունը կազմակերպվում է 12-22 հոգիանոց խմբերով:
5. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանք դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
6. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներով: Դասավանդողը և սովորողը դպրոց են գալիս անհատական նեթբուք-նոթբուքով կամ համապատասխան ուսումնական գործառույթ ունեցող այլ թվային գործիքով. տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է համացանցից, համակարգչից, էլեկտրոնային գրատախտակից, էլեկտրոնային գրիչներից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից, բջջային հեռախոսից ուսումնական նպատակներով օգտվելու հնարավորություն:
7. Ուսումնական առարկաները կազմված են դասընթացներից: Ուսուցումը կազմակերպվում է նաև ուսումնական նախագծերի մշակման և իրականացման միջոցով: Ուսուցման կազմակերպման մեջ սահմանված կարգով կիրառվում են առկա, նաև առցանց, հեռավար, տնային ուսուցման ձևեր:
8. Սովորողի առաջադիմությունը, ուսումնական արդյունքները, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում:
9. Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի (դպրոցի, դասարանի, դասընթացի, ակումբի, սովորողի ընտրությամբ գործունեության, երկարաձված օրվա, լրացուցիչ կրթության ծրագրի) տարեկան

ուսումնական օրացույցով: Դրանցով որոշված պարապմունքների, ճամբարների, ուսումնական ստուգատեսների, ծեսերի և տոների սահմանված կարգով մասնակցությունը պարտադիր ուսումնական աշխատանք է:

10. Շրջապատի, նյութական միջավայրի բարելավման, ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերը սահմանված կարգով իրականացվում են ընդհանուր հանրակրթական դասընթացների ծրագրերով:
11. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության պարապմունքներ, մանկավարժական սեմինարներ, հայրենագիտական, ուսումնական ճամփորդություններ, իրականացվել ուսումնական-հասարակական նախագծեր:
12. Ուսումնական օրը ներառում է Ծրագրի 15 րոպե տևողությամբ ընդհանուր պարապմունք՝ սահմանված կարգով և ծրագրով:
13. Մեդիագրադարանը, դպրոցական գրադարանը, դասավանդողի բլոգը սովորողին սահմանված կարգով տանը և դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:
14. Սովորողն ունի ուսումնական բլոգ, որում սահմանված կարգով արտացոլվում է նրա ուսումնական գործունեությունը:
15. Կրթահամալիրի, դպրոցի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը սովորողի պարտադիր ուսումնական աշխատանք է:
16. Ուսումնական գործունեության կազմակերպումը թույլատրվում է հիգիենիկ, այդ թվում՝ բացօթյա, միջավայրում:
17. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների բաղկացուցիչն են: Սովորողի մասնակցությունը այդ ճամփորդություններին պարտադիր է:
18. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական տարածքի և գույքի խնամքը սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունքն է:
19. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքով, տևական շրջան Հայաստանից բացակայած սովորողների համար կրթական ծրագիրը սահմանված կարգով կարող է կազմակերպվել որպես անհատական ուսումնական պլանով ու ծրագրերով ուսուցում:
20. «Հայոց լեզուն» և «Գրականությունը» ներառում են «Գրաբար» դասընթացը:
21. «Կենսաբանություն» առարկան կազմված է «Բուսաբանություն», «Կենդանաբանություն», «Մարդու անատոմիա» դասընթացներից, որոնք ներառում են էկոլոգիայի բաղկացուցիչ և ուսուցանվում փորձի հիման վրա:
22. «Բնագիտությունը» կազմակերպվում է լաբորատոր պայմաններում, փորձի հիման վրա և բնագիտական ու բնապահպանական աշխատանքների, բույսերի և կենդանիների խնամքի, էկոլոգիական, աշխարհագրական, երկրագիտական, կենսաբանական, աստղագիտական ուսումնական նախագծերով:
23. «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաների ուսուցումը կազմակերպվում է լաբորատորիայում՝ փորձի հիման վրա, ՏՀՏ օգտագործմամբ:
24. Սովորողը հանրակրթական դասընթացների և իր ընտրությամբ գործունեության ժամանակ գործնականում կիրառում է օտար լեզուներ:
25. «Տեխնոլոգիա» առարկան կազմված է «Մեդիատեխնոլոգիաներ», «Տնային տնտեսվարություն», «Դիզայն», «Գծագրություն», «Առողջագիտություն և առաջին բուժօգնություն», «Թվային միջոցների սպասարկում», «Դիզայն-խեցեգործություն» դասընթացներից, կազմակեպվում է ծեսերի, տոների, ցուցադրությունների, տոնավաճառների մասնակցության ուսումնական նախագծերի ձևով:
26. «Արվեստ» առարկան ընդգրկում է երաժշտություն, կինո, թատրոն, կերպարվեստ դասընթացները, կազմակերպվում է համերգի-ունկնդրման և խմբային երգեցողության, թատրոնի-կինոյի դիտման, թանգարան-ցուցուցադրություն այցելության, ծեսի, տոնի, համերգի, ցուցադրության կազմակերպման ուսումնական նախագծերի միջոցով:
27. «Պատմություն», «Արվեստ», «Գրաբարը ծեսի լեզու» դասընթացների մեջ ներառված են նաև «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի համապատասխան բաղադրիչները:
28. «Հասարակագիտություն» առարկան ընդգրկում է «Բարոյագիտություն», «Մարդու իրավունք» բաղադրիչները:
29. «Ֆիզիկական կրթություն, ՆՋՊ և անվտանգ կենսագործունեություն» բնագավառը 6-9-րդ դասարաններում ներառում է սովորողի ընտրած մարզաձևի թիմային պարապմունքները, մրցումները, ռազմա-մարզական խաղերը, սահմանված կարգով ռազմա-մարզական դաշտային ճամբարի կամ հավաքի մասնակցություն:
30. 6-8-րդ դասարանի սովորողն իր ընտրությամբ շաբաթական 4 ժամ իրականացնում է գործունեություններից մեկը՝ բնագիտական, ինժեներական-տեխնիկական, մաթեմատիկոսի, կինո-ֆոտո, մեդիալրագրություն, օտար լեզու և թարգմանչություն, կենդանիների և բույսերի խնամք, կերպարվեստ-դիզայն-մոդելավորում, երաժշտական գործունեություն, արհեստավորի գործունեություն, մարզական գործունեություն, թատրոն: 8-9-րդ դասարանի սովորողը կարող է ընտրել կրթահամալիրի պատանեկան ակումբներից մեկը:
31. Սովորողը տնային առաջադրանքներ և ինքնակրթության աշխատանքի խորհրդատվություն կարող է ստանալ ըստ իր անհատական ուսումնական պլանի:
32. Լրացուցիչ կրթությունը կազմակերպվում է կրթահամալիրի դպրոցներում, ուսումնական կենտրոններում՝ սովորողի ծնողի հետ կնքվող լրացուցիչ կրթության պայմանագրով, որպես ուսումնառության պայմանագրի հավելված, սահմանված կարգով:
33. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է դպրոցի ղեկավարի, դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներում և սահմանված կարգով ներկայացվող էլեկտրոնային կիսամյակային հաշվետվություններում:
34. Գիրառվում են գնահատման տարբեր ձևեր, որոնք բերվում են 10 միավորանոց համակարգի կամ ելնելով առարկայի առանձնահատկությունից՝ ստուգված, չստուգվածի: Գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքների թղթապանակը (այդ թվում՝ ինքնաստուգումներ, ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ ստուգումներ, հեռավար առաջադրանքների կատարում, հետազոտական-

ստեղծագործական աշխատանք, ուսումնական կայքի աշխատանք, ուսումնա-հասարակական նախագծեր, ուսումնական ճամփորդություններ, հայրենագիտական արշավներ, ստեղծագործական ստուգատեսներին, հավաքներին, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցություն, լրացուցիչ կրթություն), կիսամյակային հաշվետվությունները: Խրախուսվում է սովորողի ուսումնական գործունեության ինքնահսկման և ինքնաստուգման ձևերի կիրառումը և հրապարակայնացումը մեդիայի միջոցով:

35. Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստեղծագործական հավաքներում:
36. Ուսումնական կիսամյակի վերջում անց է կացվում «Ես կարողանում եմ» ստուգատեսը:
37. 9-րդ դասարանի վերջում սովորողները հանձնում են ավարտական քննություններ՝ ԿԳ նախարարության սահմանած կարգով: